


ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ
 Ե. ՓՈՐՓՈՍԵԱՆ
 Նամակ կամ որ եւ է
 գրութիւն պէտք է ուղղել առ
 Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ ԳՐԱԳՐԻ
 ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)



ՔԱՏԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ
 ԵՂԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ
 Տարեկան ողջ դրամակն. 60
 Վեցամսեայ » 35
 ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԴԵՐ
 Տարեկան Ֆրանկ 20
 Վեցամսեայ « 12

E. TOROSSIAN
 Direc.-propr. du journal arménien
 ARCHALOUYCE
 LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՏԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ
 Եւ թղթատարի ծախքը
 հոնքագրութեան վրայ է :

հոնքագրութեան ուղղուած
 գրութիւնք էս չ'են տրուիր

Ա.ՉԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ
 Կանխիկ վճարելի են

ՔՐԱՆԱՅԻ ՄԱՐԴԱՅԱՄԱՐԸ

Ինչպէս որ սովորութիւն է եւրոպական ազգերու մէջ մի քանի տարին անգամ մը մարդահամարի միջոցաւ հասկնալ բնակիչներուն թիւը, այս տարի ալ նոյնը տեղի ունենալով, կարգ մը խիստ շահեկան իրողութիւններ երևան եկած են : Բոլոր մեծ պետութիւններուն մէջ ֆրանսայի ժողովուրդն է որ ամենէն նուազ յառաջդիմութիւն կ'ընէ այս մասին : Թայմզի Փարիզի թղթակիցը արձանագրելով այս իրողութիւնը քանի մը պատճառներ կը ներկայացրնէ ֆրանսայի բնակիչներուն միւս ազգաց չափ չ'բազմանալուն :

Ֆրանսայի այս տարուան մարդահամարը կը ցուցնէ թէ անոր բնակիչներուն թիւը կ'ընէ 38,000,000 այսինքն 1896 ի մարդահամարին վրայ 330,000ի չափ յաւելում մը եղած է : Այս փոքր յաւելման 292,000ը Փարիզի և անոր արուարձաններուն մէջ տեղի ունեցած է, որուն մեծ մասը օտար գաղթականներ են, այնպէս որ Գաղիոյ միւս մասերուն մէջ միայն 38,000 բնակիչ աւելցած է հինգ տարուան ժամանակամիջոցի մը մէջ : 1850 էն ի վեր ֆրանսայի բնակիչը ի բաց առեալ սահմանագրծի փոփոխութիւնը, 35,000,000էն 38,000,000ին բարձրացած է : մինչ Անգլիոյ բնակիչը 27,000,000 էն 41,000,000 ի, Գերմանիան 35,000,000էն 56,000,000ի Աւստրիային 30,000,000էն 45,000,000, Իտալիային 23,000,000էն 32,000,000 ի և Ռուսիային 66,000,000էն 128,000,000 ի որուն մէջ մասը արդիւնք է պատերազմով առնուած տեղերու յաւելումի : Այսպէս կը տեսնենք թէ կէս դարու մէջ մինչ Անգլիա 14 միլիոն, Գերմանիա 21 միլիոն, Աւստրիա 15 միլիոն, Իտալիա 9 միլիոն, Ռուսիա 62 միլիոն ժողովուրդ աւելցուցած են իրենց բնակիչներուն վրայ : Ֆրանսա միայն 3 միլիոնի փոքր յաւելում մը ունեցած է : Իրաւամբ կ'ըսէ Թայմզ . « Թէև բնակչաց բազմամարդութիւնը միայն նշանը չ'է ազգային բարօրութեան, և ոչ ալ յաւելումը կրնայ անսահման կերպով յառաջ երթալ : տակաւին կարևոր փորձանիշ մըն է աշխարհի մէջ բաղդատական զօրութեան և ազդեցութեան » :

Ֆրանսայի բնակչաց, ուրիշ ազգերու բաղդատմամբ, այս կայուն վիճակը, շատ խորհողներով, մանաւանդ ֆրանսացի քաղաքագէտներու խորհրդածութեան նիւթ եղած է : Գտնել անոր պատճառները և բառ-

նալ զանոնք՝ ֆրանսացիներուն գլխաւոր մտատանջութիւններէն է : Անշուշտ այնչափ դժուար չ'է այս չարիքին պատճառները գտնելը որչափ զանոնք բառնալը : Յաճախ այն նոյն անհատները որ այս աղէտին պատճառները քննած, ուսումնասիրած և երևան հանած են և ազգային տեսակէտով կը պարսաւեն անոր գոյութիւնը, սակայն անձնական նկատումներով իրենք կը գործեն նոյն յանցանքները :

Երեք գլխաւոր պատճառներ տրուած են ֆրանսայի բնակչաց չ'բազմանալուն :

Առաջին, Գաղիոյ հողագործ դասակարգին ապրուստ ճարելու դժուարութիւնը : Յայտնի է թէ երկրի մը բազմամարդութիւնը աւելցնող դասակարգը միշտ գիւղացիները եղած են, և երբ ասոնք այնպիսի վիճակի մը մէջ կը գտնուին որ անոնց մէջ աճում գոյութիւն չ'ունենար, այն ասոնք բոլոր ազգը կը ֆրանսայի հողագործ դասակարգը խիստ խնայողութեամբ կ'ապրի թէև բայց շահածը հազիւ կը բաւէ միայն երկու զաւակ սնուցանելու : Ասոր արդիւնքը սա կ'ըլլայ որ ամուսնացեալք չ'են ուզեր ունենալ աւելի քան երկու զաւակ որուն մէջը մանչ ըլլայ և միւսը աղջիկ : Զարմանալի իրողութիւն մըն է որ Գաղիացիները այս սովորութիւնը այն աստիճան յառաջ տարած են որ գրեթէ ասիկա ընդհանուր կանոն մը եղած է, չէ թէ միայն գիւղերը այլ նաև քաղաքներուն մէջ :

Երկրորդ պատճառը ամուսնանալու դժուարութիւնն է : Երիտասարդ մը չ'կրնար և չ'ուզեր ամուսնանալ աղջկան մը հետ որ կ'ընդհանրէ օժիտ մը չ'ունի : Ասիկա իրողութիւն մըն է ընկերութեան բոլոր խաւերուն մէջ : արհեստաւորէն մինչև վաճառականը, գործաւորէն մինչև դրամատէրը, սպասաւորէն մինչև ազնուականը իրենց հարսնցուէն դրամօժիտ կը պահանջեն :

Աղջկան մը ունեցած դրամէն կամ հասոյթին քանակութեանէն կախեալ է անոր ամուսին մը գտնելու գիւրութիւնը :

Անոր իմացականութիւնը, դաստիարակութիւնը, նկարագրի ազնուութիւնը և յաճախ արտաքին գեղեցկութիւնը որ և է արժէք չ'ունին եթէ անոնց չ'միացնէր ոսկիներուն հնչիւնը : կտոր մը հողի եկամուտը կամ տուններու և խանութներու բանալիները : Հետեւաբար ամուսնութիւնը խիստ հազուադէպ են : ամուրի ծերեր բազմութիւն և չ'ամուսնացած աղջիկները շատ :

Երրորդ պատճառը այս երկուքին արդիւնքն է : այսինքն մեծածախս սովորութիւնները որ տիրած է ֆրանսացի կանանց բոլոր դասակարգերուն մէջ :

Հանդերձը ամենէն աւելի զբաղեցուցիչ հարցերէն մին եղած է : Այս խնդիրը թէև բոլոր միւս ազգերուն մէջ գոյութիւն ունի, բայց ֆրանսայի մէջ բացարձակապէս աւելի է :

Եւրոպիոյ գլխաւոր մայրաքաղաքներուն մէջ գիւրութեամբ կրնաս համբել այն կիները որ չ'ոսյալաբար կը ծախսեն իրենց արդուզարդին համար : և ասոնք այնպիսիներ են որոնց ամուսիններուն հարստութիւնը կը թոյլատրէ : բայց ֆրանսայի մէջ այսպէս չէ : Ֆրանսացի կիները յաճախ պարտքի կ'ենթարկուին որպէսզի իրենց ընկերներուն առջև փառասիրութիւննին յագեցնեն :

Ֆրանսայի մարդահամարին արտադրած այս խորհրդածութիւնները մեզ հայերու համար խիստ շահեկան են : որովհետև դժբաղդաբար մեր մէջն ալ դասակարգ մը երևան կուդայ, որ գաղտնական սովորութիւններուն հետեւելու ազգաւոր մուլութիւնը ունի : Ազգերուն կործանումը միշտ ներսէն եղած է : կոտորածներ, ջարդեր և հալածում բնաւ չ'են կարող բնալինջ ընել մեր ազգը : Թուրքէն, թիւրքէն և սուլթանէն աւելի սոսկալի թշնամի մը ունինք - Գաղիական սովորութիւններու մեր սիրահարութիւնը :

ՔՈՆԵՐ

(Շարև . նախորդ քիւնն)

Հակաճառութիւնը ոմանք կատեն, բայց կը սխալին : Լուրջ և անաչառ հակաճառութիւնով է միայն որ սխալ կարծիքներու քօղը կը պատռի և արդարութիւնը իր փայլուն գէմքով երևան կելլայ :

Ճշմարիտ մայր մը՝ որքան ալ վշտացեալ ըլլայ, կրկին իր սրդին կը խորհի և անոր վիշտը միայն իսկապէս կը տատապեցնէ զինքը : Մարդկային տկարութեան մէկ ապացոյցն է, որ երբ վշտերու ենթարկուի Աստուծոյ կը զիմէ : Իսկ աստութեան և հանգստութեան մէջ կը մոռնայ ամեն ինչ :

Աղքատութիւնը փոյթ չէ, միայն ազնուութիւն պէտք է ունենալ :

Հպարտութիւնը՝ ոմանց փառասիրութիւնն է, իսկ այլոց սկարութիւնը :

Կենաց ամենէն հեշտալի օրերը որ երիտասարդութեան մէջ կը գտնուին, անոնք ալ անփորձութեամբ ծանրաբեռնուած են :

Ի՞նչ սգիտութիւն երբ կը հաւատանք թէ՛ ամուսնութիւնը սուրբ է և անհրաժեշտ : Ինչո՞ւ ուրեմն կուսակրօնութեան կուսակից կ'ըլլանք :

Զբաղմունքը ամենէն զառն վշտին իսկ մը խիթարութիւն մ'է :

Երբոր գրութիւն մը կամ երկ մը կը կար-

զանք, զայն հեղինակողին չափ ուշադիր պէտք է ըլլանք սրպէսզի անոր հոգին ըմբռնենք :

Աւելի դրամ կը ծախսենք խաղալիքներու եւ անողուտ զարդերու, քան ատաքինի գործերու եւ ազգատոց, որով կ'ստիպենք ուրիշները, որ աւելի հնարքներ խորհին առաջիններուն նկատմամբ քան մտքերնին նուիրեն վերջիններուն :

Մարդիկ եւ ազգեր ճիշտ ազոց նման իրենց մէջ ահարներուն, փոքրներուն եւ քնոյ մէջ եղողներուն վնաս մը ապով կամ խոցելով կը հրճուին :

Մարդիկ իրենց համար նպատակակէտ մը կ'որոշեն, որը ամեն աշխատութիւնէ աւելի կը յարգեն եւ այդ է իրենց իղձը, որուն համար ուրիշ շատ բաներ կը զոհեն, ատով կ'զբաղին, այդ է իրենց հաճոյքը եւ անոր մէջ կը փնտռեն երջանկութիւնը . . . բայց վա՛յ անոնց որ վատ կէտի մը յառած են իրենց աչքերը :

Աստուած երկիրս չարչարանքներով ու թըշուառութիւններով, իսկ երկինք բարութիւններով ու առատութիւնով լեցուց. բայց մենք կրկին երկրի մոլութիւնները երկին ատաքինութիւններէն գերազանց համարելով, հոգով փարած ենք այս ազգին :

Ընտանիքի տեղ անձերնիս կը սիրենք, ազգութեան տեղ ազգականութիւնը, իսկ մարդկութիւնը պատուելու տեղ՝ ազգութեան կը փարինք Աստուծոյ գթութիւնը հայցելու համար, այլոց բարեխօսութեանը կը զիմնեք, իսկ Աստուածային ողորմութիւնը ստանալու համար մեր չի հասկցած լեղուով (գրարատ) աղօթքներ կը մրմնջենք :

Չ'կայ գարուն առանց աշնան, եւ ոչ ամառ դեռ ի ձմրան :

S. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

(Շարունակիչ)

Իտալացի մեծ յեղափոխական Ա. Միլըար Չիբրիանիին հայերուն նկատմամբ ունեցած կարծիքը, զոր կ'արտասուենք «Նոր-կեանք» էն :

ՀԱՅԵՐ

Ձեր Երլառք-Քէօքի զահիճը դարանակալ ձեզի կը նայի : Ձեր խողովակում եղբայրներուն արիւնտ ուրուականներով լեցուած իր մթին թաքստոցին մէջ իր ոճրագործ ու մարդասպան սապարը կը սրէ ձեզի դէմ :

Վախը որ անընդհատ զինքը կը պաշարէ՝ զայն աւելի վատ, ու աւելի վայրագ կ'ընէ :

Այդ թագակիր բորենիէն շնորհք մի՛ տկնկալէք :

Ձեր ամբողջական բնաջնջումը վճռուած է : Ինչ որ որոշուած է այդ գողահար, մոսայլ, մենակեաց ու բռնաւար հոգիին մէջ՝ պիտի գործադրուի :

Անոր ձեռքն էք, իր արիւնտարրու ու վայրագ հրոսներուն ձեռքը :

Եւրոպայի գիւտնադիտութիւնը՝ չափերու, հաշիւներու եւ կեղծիքի վրայ հիմնուած, ցուրտ ու անայլալ հանդիսատես եղաւ ձեր եղբայրներուն սպանութեանը, ձեր կրկններուն փողոտումին ու բռնաբարմանը, ձեր գիւղերուն հրդեհումին եւ ձեր Հայրենիքին աւերմանը :

Երբ դուք կը հոնդայիք, կը հոգեվարէիք Քիւրտերու եաթաղանին տակ՝ գիւտնադիտութիւնը՝ ձեր արիւնտով քրտուած՝ թոյլ կուտար ու կը պայտանաւորուէր ձեր անարդ կեղեքիչին հետ :

Ձի կայ մարդկութիւն ու զգացում հոն, ուր չափը կը սիրապետէ :

Անոնք որ ազգային սեփական յեղափոխական ուժի մը անհրաժեշտութիւնը զանց բնելով՝ զուտ գիւտնադիտական միջամտութեան մը յոյսը կը շողացնեն ձեր աչքին՝ կը խորհն ձեզի եւ կ'իջնէ զայն կը խոստանան՝ կը մատնեն ձեզի :

Ուրեմն պէտք է յանդգնութեամբ, արիւնթեամբ, զիւցազնութեամբ, մեծ զոհողութիւններով եւ մանաւանդ հոգի ու հանձարեղօրէն սարքուած ու աւելի հանձարեղօրէն գործադրու-

ուած ու վարուած ապստամբութիւնով մը բռնադատել ժողովուրդներու համակրանքը՝ որոնք իրենց կարգին՝ պիտի կրնան ձեզի ի նպաստ գիւտնադիտական միջամտութիւն մը ստիպել :

Հակառակ որ մեզ կառավարողները կը քաջաբերն ետականութիւնը եւ անտարբերութիւնը՝ հանդէպ ամեն մեծ ու ազնիւ բանի, ու հըպատակութիւնը՝ ուժին, մոլութեան, դրամին, պէտք է՛ սակոյն յուսահատուի :

Առնականութիւնը կը կորսուի ու տեղի կուտայ հպատակութեան որ վատութիւն կը նըշանակէ . բայց կը սիրեն ու կը հիանան ուրիշներու քաջութեան վրայ :

Վատագի եւ սարուկ ժողովուրդ մը տրժանի է՛ հոգածութեան : Արեւմտահայերն է իր բաժինը, Ձերինը՝ մինչեւ հիմա մարտիրոսութեան պէտք է ըլլայ զիւցազնական մտքառումներու պատմութիւն մը :

Հարատւաբութիւնը չ'են կրնր, այլ կը կուռին անոր դէմ :

Ուժին դէմ ուժ հանելը արդարացի ինքնապաշտպանութիւն է :

Ողբ ու կոծը օգուտ չ'ունի, պէտք է հակադէպ, գործել ու դարձել :

Իր ճակատագրին գիտակից ժողովուրդ մը ոչ Աստուծէ եւ ոչ ալ մարդկինքէն օգնութիւն կ'աղերսէ :

Կը միտնայ, կը կողմակերպուի, կը զինուի, կը զարնէ, ու յազմող կամ պարտուած՝ անմահութեան մէջ պիտի ապրի :

Ասոր համար դադարաբով մը փաթտուած պէտք է ըլլալ :

Յեղափոխութիւն մը որ դադարաբի մը համար չի կուռի, յեղափոխութիւն չէ, խուճապ մըն է զոր պատմութիւնը կ'արձամարէ ու չի զիջանիւր զայն իր անմահ էջերուն մէջ արձանագրելու :

Անգամ մը որ այն պայթի՛ վա՛յ անոնց որ խնջազա կ'ըլլան անոր եւ կը նկրտին զայն կիցնել, որովհետեւ յեղափոխութիւն մը սր կանգ կ'առնէ՝ իրեն պաշտպաններուն մահալճիւրը կը կնքէ :

Պէտք է ուրեմն միշտ ու միշտ պատրաստ ըլլալ գործողութեան, խելացի, խորհուած ու բանաւոր գործողութեան :

Ժողովուրդի մը կեանքին մէջ կուգայ բուպէ մը, ուր ու՛լ պէտք է գործել կամ լինալ :

Այն ատեն պէտք է՛ խնայել անդուժ թըշուախներուն :

Անգամ մը որ ուրը մերկացուցիք, պատեանը նեակեցէք եւ շեղըր կեանքերուդ հետ միայն ձգեցէք :

ԱՄԻԼՅԵՐ ՉԻՐԻԱՆԻ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

«Արշալոյս» ի Տպարանէն ճաշակուոր տպագրութեամբ լոյս տեսաւ, Նորին Ս. Օծութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս Վեհափառ Հայրիկի երկաօրութիւնն «Վերջալոյսի Ձայներ» . որոյ մասին արդէն խօսած էինք ասկէ առաջ :

Խ Ա Ո Ն Լ ՈՒ Ի Ե Ր

ՀԱՐԱՒ-ԱՓՐԻԿԷ

Նոյն իսկ Ռէօթերի գործակալութիւնը կը խստալանի թէ եօթնէն ութ հարիւր Պօէր կը պտուտի Քարի գաղթավայրին մէջ : Այս լուրին վրայ հիմնուելով կը հաստատենք թէ՛ ութն օրէ ի վեր Օրանիի եւ Քարի մէջ Պօէրներու մեծ շարժում մը տեղի ունեցած է . վասնզի անդրկական թերթերը Յունիս 17 թուականի հեռագրի մը կը հրատարակեն Մօլթէոսէն, հեռագրի՛ որ բա-

ւականաչափ լուտեսն էր և Պօէրներուն թիւը 1800ի կը հասցնէր առ առաւելն : Թարգմանաբար հոս կը գնենք յիշեալ հեռագրոյն պատճէնը :

«Մօլթէնօ Յունիս 17. — Ըստ վերջի տեղեկութեանց 1800 Պօէրներ կը պտուտին Քարի գաղթավայրը . իւրաքանչիւրը վաթսունէն երեք հարիւր պատերազմիկներով ութը գօմանտօնեյ Միալէնտի մէջ էին և երեք հարիւր Պօէր ալ արեւմտեան նահանգըուն մէջ :

«Քրիստիցիկէր և Յունչէ յայտարարութեան մէջ՝ յիշելով քսան ամիս առաջ իրենց արուած արտօնութեան՝ կը հրապարակեն թէ՛ ուղ որ գօմանտօնեյ շարժումներուն վրայ տեղեկութիւն կը հաղորդէ թշնամոյն, 50 անդրկական սակի տուգանքի պիտի դատապարտուի . վճարելու անկարողութեան պարագային, դատապարտալը երեք ամիս հետիոտն պիտի ընկերանայ գօմանտօյին :

«Ռազմական ակումբներու մէջ գերակշիռ է այն կարծիքը թէ ձիւրու ներածումը պէտք է շարունակուի կանոնաւոր կերպով, վասնզի դրստներու թիւը շուտ նըուաղելու վրայ է Քարի մէջ :

«Թշնամին կը շարունակէ նոր պօրքեր գտնել, բայց աննշան թուով :»

ՄԻՕՆԱԿԱՆՆԵՐԸ

—Մեր անցեալ թիւերէն մէկուն մէջ ըսած էինք արդէն թէ, Հրէաները Պաղեստինի մէջ վերահաստատուելու նպատակաւ կազմուած ընկերութեան մը նախագահը Կ. Քօլիս գացած էր նշանաւոր դրամատէրներու ներկայացուցչաց ընկերակցութեամբ, սուլթանին փոխատուութիւն մը առաջարկելու, եթէ նա հաւանի ընկերութեան ջանքերուն դէմ արգելքներ չ'յարուցանել :

Միօնական այս շարժման մասնակցող հրէաները, Տօքթ. Հէրցըլէն հետեւել հեռափոր ստացած են :

«Ես, Ուօլֆորն և Մարմերէք տեսակցութիւն մը ունեցանք սուլթանին հետ :

«Կը խնդրենք որ մասնաւոր ջանքեր ընէր դաշնակցութեան սուրբերը հաւաքելու և բաժնեկիցիք ծախելու :»

Միօնականք այս լուրէն կը հետեւցնեն թէ սուլթանը չ'պիտի հախաւակի եղած շարժման և թէ՛ վերջնական յաջողութիւնը ապահովեալ է :

Հեռագրին մէջ յիշուած դաշնակցութեան սուրբը դուժար մ'է զոր Միօնական ընկերութեան ամեն մտամածիւղ կը վճարէ ընդհանուր գանձանակին և բաժնեկիցիքին ալ կը վերաբերին հրէական գաղթային թըրքութիւն, 10,000,000 դրամադիւրով պանքա մը, որ պիտի հաստատուի Լոնտոնի մէջ :

Վերոյիշեալ հեռագիրը դեռ չ'աւերուած արդէն հազարաւոր բաժնիներ ծախուած էին աշխարհի ամեն կողմը :

Պոթօնի Միօնականները անմիջապէս գործի պիտի սկսին իրենց անաշխարհներուն հրահանգին համեմատ :

Այս շարժումը եզրապտտի մէջ ալ կ'եւրեւայ և Միօնիսթները այլևայլ միջոցներով մեծամեծ գումարներ ձեռք բերելու հետամուտ են և տարածիոյս չ'կայ որ պիտի յաջողին, որովհետեւ անոնց կազմակերպիչները և գործիչները ամեն տեսակէտներով հայերէն շատ կը տարբերին :

ՈՐԲԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ընկերութեան Գործ. ժողովը սոյն ազգարարութեամբ հուգայ ստիպարար խնդրել Գահիրէի և շրջակայից այն Պատ. ազգայիններէն որոնց ընկերութեանս կողմէ զրկուած են «Լուսինեանք» գրքոյկներէն, ինչպէս նաև Գործ. Ս. Առաջնորդի լուսանկարներ, որ հաճին անոնց փոխարժէքը և կամ հակառակ պարագային՝ յիշեալ գրքը կամ լուսանկարը անյապազ վերադարձնել մեզ, Ընկերութեանս գանձապետի հետեւեալ հասցեով :

GARABED ERZENGATZIAN

Rue Abdul-Aziz

Caire

Ինչպէս արդէն ծանուցուած է, «Լուսինեանք» ի հատկութեն գոյացած գումարը զրկուած է ու նոր գանձաւածները նոյնպէս պէտք զրկուի Ախարկիրի ընդհանուր որբերուն, որոնց եղիկելի կացութիւնը անձանօթ բան մ'ըլլալու չ'է ամեն զգայուն ազգայիններու :

Գործ. Վարչութիւն

Վ. Առնապարի Առնապետ
Ս. ՕՏԱՊԱՇԵԱՆ Ա. Մ. ՊԵՂՆԻՐԵԱՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԸ

ՇՆԱՉՈՒԿԵՐԷ ԳԻՇԱՏՈՒՄԻ ԻՏԱՒԱԿԱՆ ՆԱԿԱՉՆԵՐ

—*—

Իտալական նաւազներ «Գալպրիա» յաճախորդով Չինական շուրքերը պատրաստ եղած ատենին ներկայ գտնուած են ահաւելի անտարանի մը :

Նաւը կը գտնուէր Սինկափուրի և Բոլմայձի մէջտեղերը :

Նաւազ մը իր անկարգապահութեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ANCH' IO SON UOMO

(ՆՍ ԱՒ ՄԱՐԳ ԵՄ) (7)

Գ.

—Եւ ո՛չ վայրկեան մը : Գեղ նման յեղափոխականներու հետ գործ չ'ունիմ ես :

—Բայց ես յեղափոխական չ'եմ . կ'երգում որ չ'եմ :

—Մի՛ երգուր, թշուառական, գոչեց ծիրօլումո նողկանօք . կը հաւատամ այդ խօսքիդ . հակառակը հաւատացնելու հոտար պէտք է երգնուս, ոչ մէկ անգամ, այլ հազար անգամ : Ուր անուում է վատուի յեղափոխական մը : Այլ կը բաւէ, անէս գուր :

Արգար աղան կը պաղտաւէր, կը թախանձէր . բայց ի գուր :

Մարիէթիա և ձիւղէքքէ կը ձայնակցէին իրենց հիւրին, բայց ծերունին անդրբուլի էր :

—Գիտէ՞ք, կը գոչէր, ինչո՞ւ կը հոյածուի այս մարդը, Կատալարուիւնը, որ կարծուած ինչպիսի ապուշ չ'է, քաջ գիտէ որ սա ո՛չ յեղափոխական է եւ ո՛չ ալ կրնայ ըլլալ : Սա կը հաւածուի միջիայն իր սակիներուն համար . թող գոհացնէ պաշտօնեաները, և ինք հանգարա քուն պիտի քայլէ :

—Բայց վերջապէս, հայր, պատասխանեց Մարիէթիան չեղտելով իր մէն մի բար, այս մարդը փախտասպան մէկ, եւ սպաւինած է մեր յարկին տակ : Թէ ինչո՞ւ փախաւ, ինչորոյն այս կողմը բնաւ անհետ թիւն չ'կրնար ունենալ մեր

համար իմաստ պատժոյ մը ենթարկուած ըլլալով, անձնատպան ըլլալու գիտաւորութիւն յայտնած և հսկողութիւնէ խուսափելով ծայր նեւուած է :

Յուսահատին օգնութեան յիւսթալու համար անմիջապէս մակայի մը կ'ընկնէն ծով, բայց նոյն միջոցին սխալ շարժումով մը մակայը վերելալը կը շրջի :

Հանուած 12 նաւաղներէն 3 հատը գիշատուած էին այդ տեղերը վխտացող շնաձուկերէ :

Յաճախակի նաւաղները հանգիստուես կ'ըլլան այս զարհուրելի տեսարանին . առանց կարենալ օգնելու գժբաղչներուն :

Հ Ն Ո Ւ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Օտեսա 26 Յունիս . — Թիպէթէն նոր հասած պատգամաւորութիւն մը Ռուսիոյ Չարին նամակ մը և նուէրներ բերած է :

Լոնտրա 26 Յունիս . — Այսօր հրատարակուած Առնի օրօքրի մը զօրութեամբ, պատերազմի մէջ գործօն գեր կատարող զինուորներու և երկրորդական պաշտօնէից այրիներուն 13-30 անդակական ոսկոյ տարեկան առճիկ մը կը հաստատուի :

Լոնտրա 26 Յունիս . — Կղայ կը զեկուցանէ թէ՛ Պ. Պրօսթրիկ մտաւորապէս մասնախումբ մը պիտի հաստատէ, ուսումնասիրելու համար զինուորական գարնաններու կարգ ու սարքը :

Մատրիտ 26 Յունիս . — Հակակշերական շարժումները Սպանիոյ մէջ ահապահպան կը ծաւալին . ժիժօնի մօտերը գիւղաքաղաքի մը մէջ երկու եկեղեցիներ այրուած են և խռովութիւններ տեղի ունեցած են Վալանսի մէջ, ուր ժողովուրդին կողմէ պաշարուած է եկեղեցականաց թափօր մը և Արքեպիսկոպոսոս պալատը քարկոծուած է :

Բէթէրսպուրի 27 Յունիս . — Կը ծա

պարտականութեան հետ : Մենք իրեն պաշտպանը պիտի ըլլանք եւ ո՛չ թէ գտաւորը : Սակեզաո բան մ'ալ կայ . այս մարդը քեզ նախատեց օր մը, պէտք է որ դուն ալ իրեն բարիք մ'ընեսու . Կարծեմ կը զառանցես, Մարիէթիա :

—Ո՛չ, հայր, ճշմարտութիւնը կ'ըսեմ . ինձ մտիկ ըրէ :

Մանկամարդ կիներ ծիրօլումոյն գլուխը ձեռքերուն մէջ տաւ, և պահ մը խօսեցաւ աւանջի ի վար :

—Ապրի՛ս, Մարիէթիա, սերեցեալ հարսս, գոչեց ծերունին ինդպիսին . աշխարհիս բոլոր պտածաւարտութիւններէ աւելի ազդեցին այդ խօսքերդ : Այո՛, իրաւունք ունիս : Արք, Արգար աղա, ներէ՛ իմ կոշտութիւններուս, և անոպ եղի՛ր : Իմ սուսնա քու սուսնդ է, միացեալը Աստուծոյ գործն է : Եւ դու, Մարիէթիա՛, գաւաթ մը գինի . . . ո՛չ, սխալեցայ . . . լա՛ւ, ապրուկ համբոյք մը աուր ինձի :

Ճամ մը ետքը Արգար աղային ընտանիքը սեղեկութիւն կ'ատանար փախտասպանին ապահով կացութեան վրայ :

Ծիրօլումո իրաւունք ունէր : Կատալարուիւնը Արգար աղային քով ուրիշ բան չ'էր փնտսեր, բայց միայն սակի, որմէ սա արգարեա ունէր բաւական քանակութեամբ, և զոր կը պահէր մեծ ինամքով : Պատրաստ էր կեանքը քաւելու, բայց ոչ գրամը : Եւ երբ պարագաներու բերմամբ թէ՛ մին կը պահէր եւ թէ՛ միւր, կրնա՞ր փախարիլ աւելի մեծ երջանկութեան մը : Անշուշտ օտար հողի մը վրայ ազատ օք չ'ընելու տենչով կ'այրէր կը մըրէր, բայց հոգրողէպօրէն պատահ աւելի մը միայն կրնար այդ փափաքին գոհացում տալ :

նուցուի թէ՛ Պ. ժիժը ֆէքիւնէն ևս պիտի կանչուի, խաղաղութեան եզրակացութեան վերջ, և իրեն պիտի յանձնուի Պ. Լէսար, որ 1885 ին Ա. Բրանիտապոն յայտնարգած է :

Քէթիմասն 27 Յունիս . — Մալան մեծ ուժերով ամայր 25 ին Ռիչմոնդ պաշարեց : Առաւօտէն մինչեւ գիշեր տեւեց պաշարումը : Պօէրները օգնաւորաց մօտենալու ատենը ևս քաշուեցան :

Փարիզ 27 Յունիս . — Կոմս տը Լիւռ-Սալիւս Բարձրագոյն Ատենին կողմէ հնգամեայ վտարանդումի դատապարտուեցաւ :

Պրուքսէլ 27 Յունիս . — Կոմս քը Լիւռ-Սալիւս որ Բարձրագոյն Ատենին կողմէ հնգամեայ վտարանդումի դատապարտուած էր հոս հասաւ :

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՐՃԱՐԱՆ

«ԿՈՒՆ ՔԱՅԷ ԵՒՇԱ»

—*—

Էզպէքիյէ, Սրբնախա պատի զէմ, Տիար Գառնիկ Սիրունեանի սեփականութիւնը եզոզ սոյն հաստատութիւնն որ Գահիրէի ամենէն պեղատեսիլ և ամենէն օգտուեն զերքը կը պրաւէ, ոչ միայն միջազգային այլ նոյն իսկ հայկական ժամադրաւայր մը հանդիսացած է :

Սպասարկութեան մասին ցոյց տրուած փոյթըն, բնակեաց մարքութեան համար տարուած խնամքն ու զինքու շափաւորութիւնը ուրիշ ո՛չ մէկ տեղ կարելի է տեսնել, Հոն ամեն ճաշակ իր գոհացումը կրնայ գտնել :

Օտար լեզուու լրագրաց հետ կը գտնուին հայերէն ամեն թերթեր :

ԿՈՒՆ ՔԱՅԷ ԵՒՇԱ հասցեով եկած նամակներն և աւանդներն անմիջապէս կը յանձնուին իրենց տէրերուն :

Վերջապէս միայն մէկ անգամ այցելողը կ'ընտրէ սոյն Սրճարանը ընել իր ամենօրեայ յաճախաւայրը :

ԿՈՒՆ ՔԱՅԷ ԵՒՇԱ

Էզպէքիյէ, Սրբնախա պատի զէմ

Դաւաժարական պաշտօնեաները կատգած էին : Անոնք լաւ գիտէին որ Արգար աղան քաղաքէն դուրս ելլելու ժամանակ ունեցած չ'էր : Հետեւաբար ատենուր, պանդոկներու մէջ խուսափուիւնք խուզարկութեանց կը յաջարկէին, լրատեսիլ, արիւն քրտինք կը մտնէին, բայց ընդունայն :

Այսպէս օրեր, շաբաթներ անցան :

Ե .

Պաշտօնաբաշխութեան հակիրճ նկարագրութեան մէջ բաւականապէս հասկցուեցաւ որ փաստաբան Դուկաս Էֆէնախն միտմիտ մը չ'էր, յատկութեան մը, որ՝ աւելորդ է ըսել՝ արդէն չ'էր կրնար յարմարիլ իր մտանածը : Եւ խորամանկ էր, բան մը որ աւելի կը համաձայնէր իր շտհասակութեանց հետ :

Խորամանկութիւնը՝ արքարեւ՝ անհրաժեշտ է մեր այսօրուան փտտարանութեան մէջ, որ միջոց մը եղած է աւելի՛ պարզ խնդիրները կ'ընտանուէր, քան կ'ընտանէր պարզելու, տեսլի արգարութիւնը մարտերու, քան անոր ձեռնտու ըլլալու, աւելի՛ ունեւոր շտհասակարար պաշտպաններու, քան չքուար անմեղը չքմեղացնելու :

Փաստաբանութիւնը ընկերաբանական գիտութիւնն ո՛ր է, որ չ'է թէ խորամանկութեան այլ խորապիտութեան կը պահանջէ : Անոր պաշտօնն է պաշտպանել օրէնքը, եւ՝ ինկատի ատենով մարդկային բնութեան : Կարողութիւնը՝ օրէնքին խտտութիւնը մեղմելու ջանակ երբեմն, եւ ո՛չ թէ գայն խեղաթիւրելու կամ կաշկանդելու ծիպեր ընել, վճարողին քմահաճոյցը համեմատ :

(Շատուեակեցի) Ա. ՊԱԼԵԱՆ

ՏՈՒՐՔ . Ա . Յ . ԳԻՐԻՍՓԻՃԵԱՆ

Իր գլխի բը Շարա գլոտ-Պէյէ փոխադրած լինելով ի Տահէր, Շարա Պիրքէթ-էլ-Բաթլը, ֆրէրներու վարժարանին գիմնաց, կը ծանուցանէ իր արգոյ յաճախորդաց որ յետ այսու իր խնամոց պէտք սենեցողները հաճին գիմել վերոյիշեալ տեղն ուր կը գտնուի կէս օրէ առաջ ժամը 9-11 և կէս օրէ յետոյ 3-5 :

ԳՐԱՇԱՐԻ ՊԵՏՔԸ ԿԱՅ

Ու՛ր են մեր գործ փնտռող և չ'կայ ըսողները :

Երկու վարժ գրաչարի պէտքը կայ . մէկը « Արշալոյս » ի , և միւսը Հրատարակչական Ընկերութեան » համար . ամսական 80-120 ֆր . գիմել « Արշալոյս » ի Խմբագրատունը :

Ուսանող գրաչարներ ալ կ'ընդունուին :

ԱԶԴ

ԱՐՇԱԼՈՅՍԻ Տպարանէն լոյս տեսած է ԱԶԳԱՍԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՂԻՐԵՐ՝ սրը տարիներէ ի վեր սպառած էր :

Այս ութ ու կէս երկսիւնակ մեծագիր Փորձայով գիրքը Գահիրէի Հայոց Հրատարակչական Ընկերութեան երախայրիքն է : Գինն է ԵՐԵԿ ՅՐԱՆԲ

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՈՐ ԲԱՌԱԳԻՐԻ ԳԱՏԿԵՐԱԶԱՐԻ Ծ Ր Ա Ն Ս Ա Հ Ա Յ ՓԱՐԻՉ 1901

Սոյն ընդարձակ Բառգիրքը, որուն Առաջին Հատարը 1061 մեծագիր երեսներէ բաղկացած և բազմաթիւ պատկերներով զարդարուած հրատարակ ելած է և կը պարունակէ A-H գիրերը, կը վաճառուի ի Գահիրէ . գիմել ի Պէյն-էլ-Սուրէն Հայոց Եկեղեցին :

ՕՐ . ԳՐԻՍՏԻՆԷ ԳԱԶԱԶԵԱՆԻ .

ՍԹԱՌ ԼԱՅՓ

ԼՈՆՏՈՆԻ ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնեալ 1843

Բացարձակ ապահովութիւն . — Չափաւոր ապահովագրի . — Ապահովագրի հնութեան համաձայն շահու առաւելութիւն . — Իրական պահպանութիւն՝ ապահովագրի վրձարմանց յապաղումի պահուն . — Չախող պարագաներու մէջ անմիջական հաշուէյարդարութիւն . — Շահու բաժանում մինն Հինթ ՏԱՐԻՆ մէկ անգամ :

Ս . ԼԻՕՆԱՐ

Ընդհանուր ներկայացուցիչ Եգիպտոսի

ՀՆԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԲԱԹ 28 ՅՈՒՆԻՍ 1901

8014	7088	8071	5591	769	8
429	886	1042	1188	2201	3700
3404	3895	4338	4355	4819	5270
5930	6529	6648	6965	7019	7211
7517	7770	8683			

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե . ԹՈՐՈՍԵԱՆԻ

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալաքի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն , Պրիսթլ Օլիէլի ճիշդ գիմաց , Դաֆէ Տը Լա Պուրսի կից :

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներն են ևւ ասոնցմէ մինչև ցարչ 17,000,000 ծախուած է :

400 և աւելի վիսայականերով ևւ մեշայներով վարձատրուած , Երաշխատուեալ մեքենաներ :

ԱՄԵՆԷՆ ՄԵՍ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսիմ մէջ ստացած է :

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ԱՐԲՈՒՆԻԲԻՆ

ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵՍ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԽՏԻՎԱԿԱՆ ՅԱՆ

Կեղծերէն զգուշանալ , ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ Ի յաւկանջիմ :



Չորի դասեր և նորոգութիւններ , ՍԻՆԿԵՐ մեքենայից համար , յաճախորդաց տուններուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւնն ինմեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի մեքենայից

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵՍ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահարածիները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ սրէ և ընկերութեան մէկ միլեար աւելի է :

ԳԵՈՐԳ ԵԿԱՒՕՑ ՆԵՐԿԱՐ յացուցիչ ի Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ օր և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ , ընդարձակ գործառնութիւններ և հրատարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷԻՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործակատար Մազե քաանդրիա :

ԿՕՇԿԱԿԱՐ

Գ . ԵՒ Յ . ՊԵՇԻՐԵԱՆ ԵՂՐԱՐԻԿ

Պագար-Մորուր թիւ 39

Կ'ուզէ՞ք ունենալ հմուտ վարպետի ձեռքէ ելած , Ֆրանսական նորաձևութեանց համապատասխանող , ոտքերը կոշտերու ցաւերէն ազատ պահող և գիմացկուն կօշիկներ :

Դիմեցէ՛ք ի Պագար-Մուրուր թիւ 39 խանութին մէջ հաստատուած Պէշիրեան եղբարց , սրոնց գործածած ապրանքներու տուկունութիւնն և ձեւերու մասին ունեցած հոգածութիւնը ամեն տարակոյսէ վեր է :

Պէշիրեան եղբարք իրենց յաճախորդաց ըրած յանձնարարութիւնները փութով և մեծ խնամով կը պատրաստեն :

Բաւ է միայն մէկ անգամ գիմել իրենց . ապահովապէս մնայուն յաճախորդ պիտի լինիք :

ԳԱՐԻՈՒՏԻ ԸՆՏԻՐ ԱՇՈՒԹ

Ունէին՞ք մինչև ցարչ հայ մը որ գիտնար մտածել թէ՛ անուխն ալ մեծաքանակ սպառում կ'ունենայ և կրնայ կարեւոր շահ արտադրել : Առևտուրի այդ ապարիչից ալ օտարներուն թողուած էր :

Տիար Յակոբ Վարդանեան (Սանտանի քեռորդի) այժմ ամենաընտիր անուխի վաճառականութեամբ կ'զբաղի և մրցում բացած է օտարներուն դէմ :

Դիմեցէ՛ք իր միջնորդը Սուր-Առևտար թիւ 17 և 18 :

Անխարդախ կշիռ և չափաւոր գին :

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ — ՍԻՄՈՆ ՖԵԼԷԿԱՆԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ